ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՆԻ

ՋԻՀԱԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՍՈՒՆՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ)

Է.00.02-«Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Դ.Ա. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ռ.Կ. Կարապետյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 12-ին, ժ. 15.00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունն ու կարևորությունը պայմանավորված են իսլամի սուննի ծայրահեղ արմատականների՝ ջիհադի հայեցակարգի վերաբերյալ նոր մոտեցումներով և դրանց յուրատեսակ գործնական կիրարկմամբ: Այս համատեքստում կարևոր և արդիական են ժամանակակից իսլամական արմատական, հատկապես ծայրահեղ արմատական գաղափարախոսների և խմբավորումների կողմից առաջ քաշվող ջիհադի հայեցակարգային և կիրառական նոր դրսևորումների ուսումնասիրումը:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական հայեցակարգի տեսանկյունից: Իսլամական արմատական միտումների ավելացում է նկատվում նաև Ադրբեջանի Հանրապետությունում, ինչը որոշակի սպառնալիք կարող է ներկայացնել ՀՀ-ի և ԼՂՀ-ի անվտանգության համար: Ադրբեջանի քաղաքական և հոգևոր շրջանակներից բազմիցս կոչեր են հնչել ադրբեջանական հասարակությունում ավելացող իսլամական ծայրահեղ արմատական միտումներն ընդդեմ հայկական երկու պետությունների ուղղորդելու վերաբերյալ՝ դրանց հաղորդելով հայատյաց, էթնոկրոնական երանգ:

Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական գործողությունները, էթնոդավանական հակամարտությունները, Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների հանդեպ ճնշումները կարող են ուղղակի և անուղղակի մարտահրավեր դառնալ ՀՀ անվտանգության համար: Վերոնշյալի համատեքստում ջիհադի հայեցակարգային նոր միտումների ուսումնասիրումն ու վերհանումը կարևոր ու արդիական են դառնում ոչ միայն տարածաշրջանային հասարակական-քաղաքական, հասարակական-կրոնական տեղաշարժերի ու գործընթացների, այլ նաև ՀՀ և ԼՂՀ անվտանգության ռիսկերի գնահատման տեսանկյունից:

Ատենախոսության ուսումնասիրության մակարդակն ու գիտական նորույթը: Իսլամագիտության մեջ գոյություն ունի իսլամական արմատականության վերաբերյալ ուսումնասիրությունների հարուստ ավանդույթ, որի շրջանակներում արաբերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով աշխատություններում, ինչպես նաև մի շարք հայ հեղինակների հետազոտություններում մեծ տեղ են հատկացվել իսլամական գործոնի ն, դրանում արտահայտված ջիհադի հայեցակարգային որոշ դրույթներին, դրանց ազդեցությանը մուսուլմանական երկրների հասարակական-քաղաքական, կրոնական-գաղափարական և այլ զարգացումների վրա: Հետազոտությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում ուսումնասիրել ու գնահատել 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ջիհադի հայեցակարգի զարգացումը «ալ-Կաիդա»-ի

գաղափարախոսների կողմից առաջ քաշված ջիհադին առնչվող հայեցակարգային մոտեցումների համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության շարադրման գործում օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության և միջգիտակարգային հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արծարծված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է անդրադառնալ «ալ-Կաիդա»-ի գաղափարախոսների կողմից առաջ քաշված ջիհադին առնչվող գաղափարներին, դիտարկել դրանց տեսական և գործնական կիրառումների մեխանիզմները ժամանակակից սուննի իսլամական արմատական գաղափարական տիրույթում՝ չանդրադառնալով «ջիհադ» հասկացությանն ու դրան առնչվող հայեցակարգային հիմնադրույթներին իսլամի մյուս ճյուղերում:

Այդ նպատակներից ելնելով՝ հեղինակի կողմից առաջ են քաշվում հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Ներկայացնել և վերլուծել «ջիհադ» հասկացության իմաստը և նշանակությունը իսլամի ձևավորման ժամանակաշրջանում:
2. Վերհանել ջիհադի հայեցակարգի յուրահատկությունները պատմական տարբեր ժամանակահատվածներում՝ որպես քաղաքական ազդեցության գործիք:
3. Ներկայացնել և վերլուծել այն գործընթացները, որոնց ազդեցության ներքո հիմք ձևավորվեց ջիհադի նոր հայեցակարգերի ձևավորման համար:
4. Ուսումնասիրել ջիհադի հայեցակարգի առանձնահատկություններն արդի իսլամական արմատական գաղափարախոսության մեջ՝ բացահայտելով նրա գործնական կիրառման յուրահատկությունները ժամանակակից համաշխարհային զարգացումներում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ներառում են 20-րդ դարի 70-ական թվականներից մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակը: Նշված ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է իսլամական արմատական տիրույթում ջիհադի հայեցակարգի յուրահատուկ փոխակերպումներով:

Հաշվի առնելով ատենախոսության համար պատմական որոշակի ժամանակաշրջանի ներկայացման կարևորությունը՝ ատենախոսը հակիրճ անդրադարձել է ջիհադի հայեցակարգի ակունքներին, Ղուրանում և Սուննայում «ջիհադ» հասկացության հիշատակումներին, միջնադարյան մուսուլման հեղինակների աշխատություններում այդ հասկացությանն

առնչվող դրույթներին, խաչակրաց արշավանքների ժամանակ մուսուլմանական աղբյուրներում տեղ գտած ջիհադի հայեցակարգի վերաբերյալ դիտարկումներին, դրա հետագա պատմական զարգացման կարևոր շրջափուլերին ու փոփոխություններին:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հեղինակի կողմից ջիհադի տեսական և գործնական կիրառման ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդլայնել ջիհադի մասին պատկերացումները, բացահայտել ջիհադի առանձնահատկություններն արդի համաշխարհային զարգացումներում:

Աշխատության որոշ դրույթներ ու եզրահանգումներ կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության, այդ թվում՝ հայկական սփյուռքի, հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների նկատմամբ իրականավցող քաղաքականության տեսանկյունից: Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ ջիհադի հայեցակարգին վերաբերող հետագա ուսումնասիրությունների համար, կիրառվել դասախոսություններում և կրոնա-գաղափարական ուղղվածության հատուկ դասընթացներում, իսլամագիտության, արևելագիտության, կոնֆլիկտաբանության և այլ ոլորտներին առնչվող դասախոսությունների ժամանակ:

Հետազոտության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, թեմային առնչվող զեկուցումներում, գիտաժողովների ու կլոր սեղանների քննարկումներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի կողմից:

Օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն: Հետազոտությունը գրվել է արաբերեն, հայերեն, անգլերեն ու ռուսերեն լեզուներով տարբեր աշխատությունների, աղբյուրների ու տեղեկատվավերլուծական գրականության հիման վրա:

Ատենախոսության շարադրման գործում կարևորություն են ներկայացրել հատկապես մի շարք արաբական աղբյուրներ, ինչպես նաև արաբալեզու որոշ աշխատություններ: Մասնավորապես՝ ատենախոսության համար որպես աղբյուր դիտարկվել են Ղուրանը և հադիսները, որտեղ հիշատակումներ կան «ջիհադ» հասկացության վերաբերյալ:Բացի վերոհիշյալ հեղինակավոր աղբյուրներից, ատենախոսությունը շարադրելիս կարևորություն է տրվել վաղ միջնադարյան, միջնադարյան, նոր և նորագույն մի շարք մուսուլման հեղինակների՝ ջիհադի հայեցակարգային դրույթներին առնչվող արժեքավոր աշխատություններին: Մասնավորապես, կարևորվել

են վաղ միջնադարյան և միջնադարյան մուսուլման հեղինակներից Ալ-Բուխարիի[1], Մուսլիմի[2], Մալիք իբն Անասի[3], Իբն Հանբալի[4], Ալ-Մաուարդիի[5], Ալ-Տաբարիի[6], Իբն Թայմիայի[7] արժեքավոր աշխատությունները: Նոր ժամանակաշրջանի հեղինակներից ուշադրության են արժանացել Հասան Ալ-Բաննայի, Սայիդ Կուտբի[8], Ալ-Մաուդուդիի[9], Ալ-Բուտիի[10], Ալ-Ալբանիի[11], Խոմեյնիի[12] աշխատությունները: Ատենախոսության հեղինակի կողմից ուսումնասիրվել են նորագույն շրջանի իսլամական ծայրահեղ արմատական հեղինակավոր գաղափարախոսներից Աբդալլահ Ազզամի[13], Ուսամա բեն Լադենի[14], Սայֆ Ալ-Ադլի[15] ջիհադին վերաբերող գաղափարներն ու ուղերձները, որոնք նոր հիմնադրույթներով լցրեցին ջիհադի հայեցակարգը: Ատենախոսության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նորագույն շրջանի իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսներից Աբու Մուսաբ Ալ-Սուրիի[16] աշխատություններին և գաղափարներին, որոնք լույս են սփռում ժամանակակից իսլամական ծայրահեղ արմատականության մեջ առկա դրսևորումների և դրանցում ջիհադի հայեցակարգային նոր միտումների վրա: Ալ-Սուրիի աշխատություններում ոչ միայն վերլուծության են ենթարկվում 20-րդ դարի կեսերից իսլամական ծայրահեղ արմատական կառույցների կողմից ծավալված ջիհադական պայքարը, վերհանվում այդ պայքարի դրական և բացասական կողմերը, այլև՝ մատնանշվում իրականացվող և իրականացվելիք ջիհադական պայքարի հետագա ուղենիշերը:

Հետազոտության համար արժեքավոր են եղել հայ արևելագետների կողմից իսլամի, դրա հասարակական-քաղաքական, մշակութային կողմերի, դրա բաղկացուցիչ մասը կազմող երևույթների, այդ թվում՝ ջիհադի հայեցակարգին առնչվող հիմնադրույթների ուսումնասիրմանը նվիրված

---

[1]Al-Buḫārī,Ṣaḥīḥ, Kitāb al-Ǧihād, Bayrūt, 1991.
[2]Muslim, Ṣaḥīḥ, Kitāb al-Ǧihād, Bayrūt, 1975.
[3]Mālik ibn Anas, al-Muaṭā, Bayrūt, 1994.
[4] Имам Ахмад Ибн Ханбаль, Основы Сунны, Каир, 2006.
[5] Al-Māwardi A., Al-Ahkām al-Sultanīat, Al-Qāhira, 1960.
[6] Al-Tabari's Book of Jihad, A Translation from the Original Arabic, With an Introduction, Commentary, and Notes by Yasir S. Ibrahim, Istanbul, 2007.
[7] Taīmīa I., Maǧmuat al-Fatāwā, Al-Riyād, 1961-1964.
[8] Quṭb S., Al-Taṣauīr Al-Fana fi al- Qurān, Dar Al-Mūaraf, Al-Qāhira, 1994.
[9] Al-Mawdūdī A., Waǧib al- Šabāb al-Islamī al-Īuwm, Makātal-Maqāramat, 1381.
[10] Al-Buti R.,Hakaḏa wa al-Nadūl Ila Al-Islām, b.d.t.
[11] Al-Albānī N., Al-Aqīda Al-Taḥāuyīa, Al-Maṭāb al-Islamī,Bayrūt, 1404/1984.
[12] Имам Хомейни, Последнее послание, политико-религиозное завещание, Тегеран,, 1997.
[13] 'zām A., Bašāīr al-Nasr, Bayrūt, 1992.
[14] Al Qaeda's Second Fatwa, February 23, 1998, http://www.pbs.org/newshour/updates/military-jan-june98-fatwa_1998, (Մուտք՝ հունվարի 13, 2013թ.)
[15]Al-'dl S. Al-Īmn ua al-Istīḫbarāt, http://www.ansar1.info/showthread.php?t=33433 (Մուտք՝ հոկտեմբերի 12, 2012թ.).
[16]As-Sūri A.M., D□ūa al-Mqaūama al-Islāmīa al-□lāmīa, Dīsmbr 2004.

աշխատությունները, մասնավորապես՝ Ն.Հ. Հովհաննիսյանի[17], Վ.Ա. Բայբուրդյանի[18], Դ.Ա. Հովհաննիսյանի[19], Ա.Ա Փաշայանի[20], Ռ.Կ. Կարապետյանի[21], Ս.Ա. Մանուկյանի[22], Հ.Մ. Քոչարյանի[23]արժեքավորաշխատությունները և հոդվածները:

Արևմտյան հեղինակներից ատենախոսության շարադրման ժամանակ օգտագործվելեն Գ. Գրյունեբաումի[24], Ք. Հիլեբրանտի[25], Ռ. Ֆայրստոնի[26], Ա. Ռաշիդի[27] և այլոց հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնցում

---

[17] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Արաբները VII դարից մինչև 1516 թ., հ. I, Երևան, 2003: Նույնի, Արաբական երկրների պատմություն, հ. IV, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Երևան, 2007: Նույնի, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006: Оганесян Н., Активизация ислама, характер, специфика и последствия. В кн., Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ереван, 1986.

[18] Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011: Նույնի, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:

[19] Հովհաննիսյան Դ., Ժամանակակից ծայրահեղ իսլամիստական կառույցների ակունքները («Ջամաաթ ալ-Թաբլիղ»-ը), Հանրապետական, թ. 7, Երևան, 2003:: Оганесян Д.А., Ценностная система ислама: начало пути, Отечественные записки, 1, Москва, 2004, стр. 478-490. Он же, Хабар и хадис. XII Республиканская конф. Молодых востоковедов, Ереван, 1987. Он же, Хабар в культурном сознании общества доисламской и раннеисламской Аравии. В кн., Проблемы арабской культуры, Москва, 1987. Он же, Время и история в исламе и христианстве, Материалы объединенной сессии кафедр арабск. филологии и семитологии МГУ, ЛГУ, ТГУ и ЕГУ, Москва, 1992. Он же, К вопросу о переосмыслении категорий времени и пространства, В сб., Тезисы участников конференции кафедр арабистики и семитологии Ереванского, Московского, Санкт-Петербургского и Тбилисского университетов, С. Петербург, 2000. Он же, Критерии истины в Коране, В кн., Сборник статей, посвяшенный 80-летию академика К.Г. Церетели, Тбилиси, 2003, стр. 149-157.

[20] Փաշայան Ա., Ջիհադ հասկացության և դրա մեկնաբանության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2003, XXII, էջ 157-172: Նույնի, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Երևան, 2003, էջ 247: Նույնի, Ալ-Կաիդան ջիհադական շարժման համատեքստում, Հանրապետական, 5(25), 2005, էջ 28-34: Նույնի, Իսլամն Ադրբեջանում, անցյալը և ներկան, Երևան, 2014:

[21] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

[22] Манукян С., Исламский фундаментализм в Сирии в 1960-80-х гг, Ереван, 2002; Он же, Исламский фундаментализм в Сирии (30-60-е годы XX в.), Востоковедный сборник, 4, Москва, 2002, стр. 150-180; Он же, Политический ислам в Сирии, Арабские страны Западной Азии и Северной Африки, 5, Москва, стр. 247-260.

[23] Քոչարյան Հ., Ումմայի կարգավիճակի բնորոշումը Ղուրանում և վաղ իսլամական սկզբնաղբյուրներում, ատենախոսություն պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005:

[24] Грюнебаум Г., Класический ислам: очерки истории, М, Наука, 1988.

[25] Hillenbrand C., The Crusades: Islamic Perspectives, Edinburgh University Press, 1999.

[26] Firestone R., Jihad. The Origin of Holy War in Islam, Oxford University Press, 1999.

[27] Rashid A., Jihad: The rise of militant Islam in Central Asia, New Haven, London, 2002.

առնչություններ կան ատենախոսության թեմայի վերաբերյալ: Իսլամական գործոնի և իսլամական արմատականության հետ կապված հիմնախնդիրների ազդեցությունն ու ջիհադի հայեցակարգի քաղաքական նշանակությունը ներկայիս հասարակական-քաղաքական զարգացումներում ուսումնասիրված են Բ. Լոուրենսի[28], Բ. Լյույիսի[29], Դ. Փայփսի[30] և այլոց աշխատություններում: «Ալ-Կաիդա»-ի կողմից ջիհադի հայեցակարգային հիմնադրույթների մշակման ու ջիհադին առնչվող գաղափարների առաջ քաշմանն են նվիրված Ժ. Կեպելի[31], Ռ. Բոնիի[32], Մ. Բոների[33], Դ. Քուկի[34], Դ. Քիբլի[35], Ջ. Էսպոզիտոյի[36], Ռ. Գունարատնայի[37], Թ. Հեգհամերի[38], Գ. Մարանչիի[39] և այլոց արժեքավոր աշխատությունները: Մասնավորապես Կեպելն ու Լյույիսն իրենց աշխատություններում անդրադառնում են 20-րդ դարի վերջին իսլամական ծայրահեղ արմատական միտումներին՝ դրանցում տեսնելով գաղափարական անկման պատճառներ, որոնք էլ, ըստ ատենախոսության հեղինակի, արդի իսլամական արմատականության, մասնավորապես ծայրահեղ արմատականության մեջ տեղ գտած գործընթացների հիմքում կարելի է դիտարկել:

«Ալ-Կաիդա»-ի նոր սերնդի գաղափարախոսների կողմից առաջ քաշված ջիհադի հայեցակարգին առնչվող հիմնադրույթները ներկայացված են Բ. Լիայի[40], Մ. Շեուերի[41]և այլոց աշխատություններում, որոնք ևս ուսումնասիրվել են ատենախոսությունը շարադրելիս:

---

[28] Lawrence B., Defenders of God. The Fundamentalist Revolt Against the Modern Age, San Francisco,1989.
[29] Lewis B., Islam and the West. New York-Oxford: Oxford University Press, 1993.
[30] Pipes D., The Long Shadow, Culture and Politics in the Middle East, London, 1989.
[31]Кепель Ж., Джихад: Экспансия и закат исламизма, Москва, 2004.
[32] Bonney R., Jihad From Quran to bin Laden, New York. Palgrave Macmillan.
[33] Bonner M., Jihad in Islamic History: Doctrines and Practice, New Jersey-Princeton, 2006,
[34] Cook D., Understanding Jihad, Los Angeles-University of California Press.
[35] Kibble D.G., Understanding Islamic Fundamentalism. Military Review (US Army Publication), Sept.-Oct. 1995.
[36] Esposito J., Unholy War. Terror in the Name of Islam, Oxford: Oxford University Press, 2002.
[37] Gunaratna R., The Al Qaida Training Camps of Afghanistan and Beyond, The Making of a Terrorist: Recruitment, Training and Root Causes (Ed. Forest,J.F.), Westport, CT: 2006, vol. II, Gunaratna, Rohan Inside Al-Qaeda: Global Network of Terror (London: Hurst and Co., 2002).
[38] Hegghammer Th., Jihad in Saudi Arabia. Violence and Pan-Islamism since 1979, Cambridge University Press: New York, 2010.
[39] Marranci G., Jihad Beyond Islam, Oxford, Oxford International Publishers Ltd, 2006.
[40] Lia B., Architect of global jihad,The life of Al Qaeda Strategist Abu Mus'ab Al-Suri. Columbia University Press, 2008, Lia B., Hegghammer Th., Jihadi Strategic Studies, The alleged al-Qaida policy study preceeding the Madrid bombings, Studies in Conflict and Terrorism, 27 (5), September-October, 2004.
[41]Scheuer M., Imperial Hubris, Why the West Is Losing the War on Terror, Washington D.C., 2004.

Խորհրդային և ռուսաստանյան որոշ հեղինակներ՝ իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են ատենախոսության թեմային: Արդի իսլամական արմատական շարժումները, դրանցում առկա միտումները ճիշտ ընկալելու համար ուշադրության են արժանի, Ա.Վ. Կորովիկովի[42], Ե.Մ. Պրիմակովի[43], Ս.Բ. Ֆիլատովի[44], Վ.Ա. Մալաշենկոյի[45], Լ.Ռ. Պոլոնսկայայի[46], Ն.Վ. Ժդանովի[47], Զ.Ն. Լևինի[48], Դ.Բ. Մալիշևայի[49] և այլոց աշխատությունները: Իսլամական արմատականության հայեցակարգային հիմնադրույթների, դրանցում պատմական և պատմամշակութային վերլուծությունների ընկալման համար ուսումնասիրվել են Ա.Մ. Վասիլևի[50], Լ.Պ. Սյուկիայնենի[51], Ս.Ա. Կիրիլինայի[52], Ն.Ի. Պրոնինի[53] և այլնի աշխատությունները: Ջիհադի հայեցակարգի առանձին հիմնադրույթների կիրառումն ինչպես մուսուլմանական երկրների պետական, այնպես էլ ոչ պետական իսլամական կազմակերպությունների կողմից ուսումնասիրված են Ա.Ա. Իգնատենկոյի[54], Ս.Լ. Ազևի[55], Ռ.Մ. Շարիպովայի[56] և այլնի աշխատություններում:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում մեծ թիվ են կազմում ինչպես արաբական, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարաբնույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական էլեկտրոնային կայքերը:

Հետազոտության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են 10 ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից:

---

[42] Коровиков А., Исламский экстремизм в арабских странах, Москва, 1990.
[43] Примаков Е., Восток после краха колониальной системы, Москва, 1982.
[44] Филатов С., Фундаментализм. Возврашение к основам: Протестанский фундаментализм, Москва, 2003.
[45] Малашенко В., Мусульманский мир СНГ, Москва, 1996.
[46] Полонская Л., Вафа А.Х., Восток: идеи и идеологи: (Критика буржуазных н мелкобуржуазных концепций "трегьего пути" развития), Москва, 1982.
[47] Жданов Н., Исламская концепция миропорядка, Москва, Междунар. Отношения, 2003., Жданов Н. В., Игнатенко А., Ислам на пороге XXI века, Москва, 1989.
[48] Левин З., Фундаментализм, Москва, 2003.
[49] Малышева Д., Исламско-фундаменталистский проект в реалиях современного мира: Мировая экономика и международные отношения, N 7, 1999.
[50] Васильев А., История Саудовской Аравии, Москва, 1982.
[51] Сюкияйнен Л., Шариат и мусульманско-правовая культура, Москва, 1997.
[52] Кириллина С. Ислам в общественной жизни Египта (2-ая половина XIX-начало XX века), Москва, 1989.
[53] Пронин Н. История Ливии (конец XIX В.-1969г.), Москва, 1975.
[54] Игнатенко А., Халифы без халифата, Москва, 1988.
[55] Агаев С., Иранская революция: воспоминания о будущем. Народы Азии и Африки, 1989.
[56] Шарипова Р., Панисламизм сегодня: идеология и практика Лиги исламского мира, Москва, 1986.

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, ներկայացված են օգտագործված սկզբնաղբյուրներն ու գրականությունը:

Առաջին գլուխը՝ «ՋԻՀԱԴ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՎԱՂԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ 20-ՐԴ ԴԱՐ», բաժանվում է երեք ենթագլուխների: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Ջիհադ» հասկացության ձևավորումը վաղ իսլամական շրջանում և դրա գործնական կիրառումը 7-9-րդ դդ.»** համառոտ անդրադարձ է կատարվում «ջիհադ» հասկացության ձևավորման ակունքներին, խոսվում՝Ղուրանում և հադիսներում «ջիհադ» հասկացության հիշատակումների և հետագա մուսուլման հեղինակների կողմից դրա կիրառական նշանակության մասին:

Վաղիսլամական շրջանում գոյություն ունեցող մուսուլմանական աղբյուրներում արծարծված ջիհադը ներկայանում է ինչպես սեփական արատների դեմ, այնպես էլ Աստծո ճանապարհինմղվող պայքար, որին մուսուլմանը պետք է տրվի անձնվիրաբար, սեփական ունեցվածքով և անձով: Սահմանվեցին ջիհադի հարձակողական և պաշտպանողական բնորոշումները: Հաշվի առնելով նոր ձևավորված կրոնի տարածման և այլադավանների դեմ մղվող պայքարի առաջնահերթությունները, տվյալ ժամանակաշրջանում «ջիհադ» հասկացության մեջ առավել շեշտվեց նրա ռազմական բաղկացուցիչը, ինչն էլ իսլամական կրոնի տարածման ու մուսուլմանական լայնածավալ խալիֆայության ստեղծման պատճառներից մեկը դարձավ:

Հաջորդ՝ **«Ջիհադի հայեցակարգը 10-17-րդ դդ.»** ենթագլխում, խոսվում է ջիհադի՝որպես հայեցակարգ ձևավորվելու մասին, որը12-14-րդ դդ. ստացավ ամբողջական բնույթ: Այն հետագայում փոքր ինչ վերաձևակերպվեց և լրացվեց՝ կապված կոնկրետ ժամանակաշրջանի պահանջների հետ:

Սրբազան պատերազմը կարևոր գործոն էր Օսմանյան պետության կազմավորման և զարգացման համար, որի ծայրամասերի մուսուլման բնակիչները տոգորված էին անընդհատ տարածվելու, ջիհադի միջոցով սեփական տարածքներն ընդլայնելու գաղափարներով: 15-րդ դարի երկրորդ քառորդից սկսած Սեֆյան շեյխերը «հանուն հավատի» նշանաբանի ներքո ղզլբաշական ցեղային զորամիավորումների գլուխ անցած սկսեցին հաճախակի ռազմարշավներ կազմակերպել դեպի հարևան երկրներ: Սեֆյան Իրանի աստիճանական հզորացումը պետք է հանգեցներ իր հարևան հզոր սուննիական մուսուլմանական երկրի՝ Օսմանյան կայսրության հետ բախման և պատերազմների, որոնց նույնպես տրվում էր կրոնական բովանդակություն:

«Ջիհադի հայեցակարգը 18-20-րդ դդ.» վերնագրված երրորդ ենթագլխում խոսվում է 18-20-րդ դարերում ջիհադի հայեցակարգում տեղ գտած փոփոխությունների մասին, որոնք նկատվեցին մուսուլմանական

աշխարհում ծայր առած վերափոխումների և հետագա գործընթացների հետ կապված:

19-րդ դարի 70-ական թթ.-ին մուսուլմանական աշխարհում ծագած պանիսլամական շարժումն ակտիվ շրջանառության մեջ դրեց ջիհադի հայեցակարգը՝ նպատակ հետապնդելով այդ գաղափարների ներքո միավորել մուսուլմաններին: 19-րդ դարի վերջից և 20-րդ դարի սկզբից աստիճանաբար ակտիվացող իսլամական արմատական միտումները նույնպես նպաստեցինջիհադի հայեցակարգային դրույթների ակտիվ շրջանառությանը՝ սեփական նպատակներին ծառայեցնելու համար:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է **«ՋԻՀԱԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ»** բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին՝**«Մուսուլմանական աշխարհում ստեղծված իրավիճակը 20-րդ դարի վերջում»** վերնագրված ենթագլխում ուսումնասիրվում են մուսուլմանական աշխարհում ստեղծված իրավիճակը, տեղ գտած փոփոխություններն ու ջիհադի հայեցակարգի վրա դրանց ազդեցությունը:

Իսլամական աշխարհը վերածվեց միջազգային քաղաքականության սուբյեկտի, առաջին հերթին կապված մի շարք մուսուլմանական միջպետական և վերազգային կառույցների և կազմակերպությունների ստեղծման հետ (Իսլամական համագործակցության կազմակերպություն, Արաբական երկրների լիգա և այլն): Այնուամենայնիվ, 20-րդ դարի երրորդ քառորդից ստեղծված վերազգային և միջպետական կառույցներում մուսուլմանական աշխարհին առնչվող այս կամ այն խնդիրների շուրջ առկա անհամաձայնությունները, անգամ տարաձայնություններն ու հակասություններն անարդյունավետ էին դարձնում վերջինների գործունեությունը:Իսլամական աշխարհում և նրա սահմաններից դուրս գործող իսլամական արմատական կառույցների շարքում սկսեցին առանձնանալ այն կազմակերպություններն ու անհատները, որոնք հուսահատված լինելով մուսուլմանական պետությունների կամ վերազգային կառույցների գործունեության անարդյունավետությունից, փորձեցին ստեղծել մուսուլմանական հասարակական-քաղաքական մոդելի իրենց տեսլականը՝ արդարացնելով սեփական նպատակների իրականացման համար բռնի ուժով պայքարը:

Երկրորդ՝ **«Ջիհադի հայեցակարգի նոր դրսևորումները. Աբդալլահ Ազզամի գործունեությունը»** վերնագրված ենթագլխում խոսվում է 1979թ. սկսված աֆղանական պատերազմի հետևանքով ակտիվացած իսլամական ծայրահեղական ներուժի, ի հայտ եկած նոր գաղափարախոսներից Աբդալլահ Ազզամի ու նրա կողմից առաջ քաշված ջիհադի հայեցակարգին առնչվող նոր մոտեցումների մասին: Ազզամի կողմից 20-րդ դարի 80-ական թթ. իսլամական արմատական գաղափարախոսության մեջ առաջ քաշված ջիհադի հայեցակարգային նոր հիմնադրույթները հետևյալն էին՝

1. Ոչ մուսուլմանական երկրի կողմից մուսուլմանականերկիր ներխուժումը անհապաղ ռազմական միջամտություն է պահանջում: Բոլոր արական սեռի մուսուլմանները, ովքեր ունակ են մասնակցել ռազմական գործողությունների, պետք է պաշտպանեն բռնազավթված մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ որ լինեն:

2. Մուսուլմանական երկրում բռնազավթողների դեմ պայքարը մուսուլմանի «Անհատական պարտականությունն» է, որի համար վերջինս կարիք չունի թույլտվության:

3. Ջիհադը պետք է մշտական բնույթ կրի, այսինքն՝ լինի շարունակական՝ ընթանալով նաև գաղափարական տիրույթում:

4. Ազզամը կարևորություն է տալիսնաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների կողմից անհավատների դեմ իրականացվող պայքարին:

Երրորդ՝**«Ալ-Կաիդա»-ի ձևավորումն ու ջիհադական պայքարի ցանցայնացումը»** ենթագլխում խոսվում է «ալ-Կաիդա»-ի ձևավորման, նրա աստիճանական ցանցայնացման մասին:

«Ալ-Կաիդա»-ն Աբդալլահ Ազզամի և Ուսամա Բեն Լադենի շնորհիվ վերածվեց իսլամականների համար նոր իսլամական արմատական գաղափարների մշակման և քարոզչության կենտրոնի, իսկ «ալ-Կաիդա»-ի ռազմական պատրաստության ճամբարները դարձան այն հավաքատեղին, որտեղից նոր իսլամական գաղափարներով տոգորված և ռազմական պատրաստություն անցած ջիհադականները սփռվեցին աշխարհով մեկ՝ դառնալով աշխարհի տարբեր հատվածներում ջիհադական պայքարի առարկայական դրսևորումների պատճառ:

Չորրորդ՝**«Ուսամա բեն Լադենը և «Համընդհանուր ջիհադի» հայեցակարգը 20-րդ դարի վերջին տասնամյակում»** վերնագրված ենթագլխում խոսվում է ձևավորված ջիհադական պայքարում Ուսամա Բեն Լադենի դերակատարության, նրա կողմից ջիհադական պայքարին համընդհանուր բնույթ հաղորդելու և «ալ-Կաիդա»-ի՝ որպես այդ համընդհանուր ջիհադական պայքարի առաջամարտիկ դառնալու մասին:

Բեն Լադենի կողմից առաջ քաշված «Համընդհանուր ջիհադի» հայեցակարգի մեջ ներառված էին երեք հիմնական տարր, որոնցով այն տարբերվեց այլ իսլամական ծայրահեղ արմատական ուղղությունների կողմից առաջ քաշված գաղափարներից.

1. ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները հայտարարվեցին հիմնական հակառակորդ, այսինքն՝ «Մերձավոր թշնամուց»անցում կատարվեց դեպի «Հեռավոր թշնամու»: Դա առանձնացնում էր համընդհանուր ջիհադականներին մյուս ջիհադականներից նրանով, որ մինչ այդ ջիհադականների թիրախները լոկալ բնույթ էին կրում:

2. «Ալ-Կաիդա»-ն ներկայացրեց իր կողմից իրականացրած գործողությունները՝ որպես իսլամի պաշտպանության գործիք՝մուսուլմանական միասնության կոչ հղելով ընդհանուր թշնամու դեմ:

3. Հայտարարված պատերազմը ստացավ համընդհանուր բնույթ: Թիրախների ընտրության հարցում Բեն Լադենը չսահմանափակվեց մեկ երկրով: Նակոչ արեց հարվածել ամերիկյան օբյեկտներին և շահերին ամբողջ աշխարհով մեկ:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝ «ՋԻՀԱԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ»**, բաժանված է երեք ենթագլուխների: Առաջին՝ **«9/11. Պայքար միջազգային ահաբեկչության դեմ. «Ալ-Կաիդա»-ն նոր մարտահրավերների առաջ. Այման Ալ-Զաուահիրի, Աբու Մուսաբ Ալ-Զարկաուի, Սայֆ Ալ-Ադլ»** վերնագրված ենթագլխում խոսվում է ԱՄՆ դեմ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո հայտարարված համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի, որպես թիրախ ընտրված «ալ-Կաիդա»-ի դեմ իրականացվող ռազմական գործողությունների մասին:

21-րդ դարի առաջին տասնամյակում տեղ գտած իսլամական արմատական գաղափարախոսության և խմբավորումների նկատմամբ համընդհանուր ճնշումների ֆոնի ներքո, իսլամական ծայրահեղականների, հատկապես «ալ-Կաիդա»-ի գաղափարախոսների կողմից ռազմավարական ուղենիշերի պլանավորման գործում կարևորվեցին 2001թ. ցանցային կառույցի վերածված «ալ-Կաիդա»-ի ճյուղավորումների դիրքերի ամրապնդմանն ու կենսունակության ապահովմանն ուղղված քայլերը: «Ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակում աչքի ընկան Այման Ալ-Զաուահիրին, Աբու Մուսաբ Ալ-Զարկաուին, Սայֆ Ալ-Ադլը, ովքեր իրենց ուղերձներով ու գործողություններով կարևորեցին «Մերձավոր թշնամու» դեմ իրականացվող պայքարը:

Երկրորդ՝ **«Ալ-Կաիդա»-ի մարտավարության փոփոխությունները 21-րդ դարի առաջին տասնամյակում. Աբու Մուսաբ Ալ-Սուրիի «Նիզամ լա Թանզիմ» հայեցակարգը»** ենթագլխում, խոսվում է «ալ-Կաիդա»-ի կողմից իրականացված ջիհադական պայքարում նկատվող նոր մարտավարական ուղենիշերի մասին:

«Ալ-Կաիդա»-ի նոր սերնդի գաղափարախոսներից Աբու Մուսաբ Ալ-Սուրիի կողմից մշակվեցին ժամանակակից պայմաններում ջիհադի գաղափարախոսության գործնական կիրառման խնդիրները, տրվեց տարբեր ժամանակներում իրականացված ջիհադական պայքարի վերլուծություն՝ ներկայացնելով նրա թույլ և ուժեղ կողմերը:

Ալ-Սուրիի կողմից առաջ քաշված ջիհադական պայքարի իրականացման ռազմավարությունը հիմնվում էր 2 տեսակի ջիհադի վրա.

1. անհատական ահաբեկչական ջիհադ և սակավաթիվ, միմյանցից անկախ խմբերի գաղտնի գործողությունների ակտիվություն, որը ենթադրում է պարտիզանական պայքարի միջոցով թշնամու դիրքերի կազմաքանդում,

2. անհրաժեշտ նախադրյալների առկայությամբ պայմանավորված՝ մասնակցություն բաց ռազմաճակատների ջիհադում: Այն իր հերթին ենթադրում է տարածքների վերահսկողություն, որոնց ազատագրումից հետո այդտեղսահմանվելու են շարիաթի օրենքները:

Ալ-Սուրին առաջարկում է նոր սերնդի ջիհադական պայքարի բանաձև «նիզամ լա թանզիմ» (համակարգ, ոչ թե կազմակերպություն): Այն ենթադրում է գործողությունների համակարգ, այլ ոչ թե կենտրոնացված, գաղտնի կազմակերպություն գործողություններ իրականացնելու համար:

Երրորդ՝ **«Ջիհադական պայքարը և իսլամական ծայրահեղ արմատականության ներկա միտումները»** անվանումով ենթագլխում վերլուծվում են 21-րդ դարի առաջին տասնամյակում իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում տեղի ունեցող զարգացումներն ու փոխակերպումները:

Եզրակացության մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, ներկայացվում՝ արված եզրակացությունները:

- Ջիհադի հայեցակարգի գաղափարական և գործնական կիրառման ակունքները գնում են մինչև իսլամի ձևավորման և իսլամական պետականության ստեղծման ժամանակաշրջան, երբ Ղուրանում, հետագայում նաև Սուննայում սահմանվեցին մուսուլմանների կողմից ջիհադի իրականացման ուղենիշերը՝ Աստծո և նրա մարգարեի համար ջանք թափելով, տքնելով, սեփական կյանքի, ունեցվածքի զոհաբերությամբ և ուղղակի խոսքով: Ջիհադի կարգախոսների ներքո իրականացվեցիննորաստեղծ Արաբական խալիֆայության սահմանների ընդլայնման, արտաքին քաղաքականության, հարակից երկրների և այդ երկրների բնակչության հետ փոխառնչությունների և փոխհարաբերակցության մեխանիզմների մշակումները:
- Վաղիսլամական ժամանակաշրջանում մուսուլմանների համար ջիհադ հասկացության կարևորությունը նպաստեց տարբեր մուսուլման աստվածաբանների աշխատություններում ջիհադին առնչվող հայեցակարգային հիմնադրույթների մշակմանը: Խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ մուսուլմանական աշխարհը ենթարկվեց բռնազավթման, ևս ընդգծվեցին իսլամում ջիհադի հայեցակարգի կարևորությունն ու անհրաժեշտությունը օտար տիրապետության դեմ ոտքի ելնող մուսուլմանների համար: Միջին դարերում ջիհադի հայեցակարգը դիտարկվում էր այդ ժամանակաշրջանի սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացների համատեքստում, քանզի հիմնական նվաճումների ժամանակաշրջանն անցյալում էր, և մուսուլմանական աշխարհը կենտրոնացած էր ներքին կյանքում առկա հիմնախնդիրների վրա:
- Նոր շրջանում, կապված մուսուլմանական աշխարհում տեղ գտած բարեփոխումների ժամանակաշրջանների հետ, ջիհադի հայեցակարգը և նրա հիմնադրույթները նոր վերափոխումների ենթարկվեցին: Այդ ժամանակ ի հայտ եկած իսլամական արմատական ուժերն ու գաղափարախոսերը փորձեցին սահմանել նոր ժամանակներում ջիհադի գաղափարախոսության և դրա շրջանակներում իրականացվող պայքարի հիմնադրույթները:

• 20-րդ դարի վերջում աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում ի հայտ եկան ջիհադի հայեցակարգային և գործնական կիրառման նոր ուղենիշեր: 1979-1989 թթ. Աֆղանստանում իրականացվող ջիհադական պայքարը հնարավորություն ստեղծեց ջիհադի հայեցակարգի նոր մշակումների և իսլամական արմատականների նոր երիտասարդ սերնդի համար ինքնադրսևորվելու և այդ պայքարում սեփական ներդրումն ունենալու առումով:

• 1980-90–ական թթ. ջիհադի հայեցակարգային նոր մոտեցումների գլխավոր գործոնը Աբդալլահ Ազզամի բավական լավ ձևակերպված և տարածված գաղափարախոսությունն էր: Այն արդարացնում էր Աֆղանստանում իրականացվող ջիհադի պայքարին այլ մուսուլմանների մասնակցությունը՝ այն դիտելով որպես յուրաքանչյուր մուսուլմանի պարտականություն: 20-րդ դարի վերջում ջիհադական պայքարի առաջամարտիկ հանդիսացող «ալ-Կաիդա»-նկարողացավ աշխարհի տարբեր հատվածներում ստեղծած ճամբարներում ռազմական պատրաստություն տալ հազարավոր իսլամականների, որոնք տեղափոխվում էին ջիհադի այլ ճակատներ՝ մասնակցելով աշխարհի տարբեր հատվածներում իրականացվող ռազմականպայքարին:

• Ուսամա Բեն Լադենի կողմից առաջ քաշված «Համընդհանուր ջիհադի» գաղափարը հանգեցրեց իսլամական ծայրահեղականների կողմից 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի նկատմամբ իրականացրած աննախադեպ ահաբեկչական գործողությունների իրականացմանը: 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո հայտարարվեց միջազգային ահաբեկչության դեմ պայքար: ԱՄՆ և նրա դաշնակիցների կողմից ղեկավարված ահաբեկչության դեմ պայքարի թիրախ ընտրվեց վերոհիշյալ բռնարարքների մեջ մեղադրվող «ալ-Կաիդա»-ն, վերջինի անդամները, սատարող ուժերն ու ղեկավար շրջանակը:

• 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում իսլամական աշխարհում և ընդհանրապես համաշխարհային մասշտաբով տեղ գտած գործընթացներն իրենց ազդեցությունն ունեցան ջիհադի հայեցակարգի վրա: Մուսուլման աստվածաբանների և հատկապես իսլամական ծայրահեղ արմատականների կողմից փորձեր արվեցին ստեղծված իրողությանն ու իրավիճակին համահունչ սահմանել ջիհադի հայեցակարգը՝ այն համալրելով նոր գաղափարներով: Ջիհադի հայեցակարգում նկատվեցին նաևռազմավարական որոշ փոփոխություններ:

• Ջիհադի գաղափարախոսության արդի սուննի ծայրահեղական հեղինակների մեծամասնությունը (Այման Ալ-Զաուահիրի, Սայֆ Ալ-Ադլ, Աբու Մուսաբ Ալ-Սուրի և այլն) իրենց գաղափարներում կարևորում էին «Մերձավոր թշնամու» դեմ մղվող պայքարը: Սակայն, դրան զուգահեռ ջիհադականները շարունակում են նաև «Հեռավոր թշնամու» դեմ ուղղված գործողությունները՝ նպատակ ունենալով լարվածություն առաջացնել նաև ոչ մուսուլմանական տարածքներում:

• 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում ջիհադի հայեցակարգային փոփոխությունների և աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակի կողմից կարևորվեցին կառույցի ճյուղավորումների ակտիվացումն ու դրանց անվտանգությանն ուղղված քայլերի իրականացումը:
• 21-րդ դարի երկրորդ տասնամյակի առաջին տարիները վկայում են, որ իսլամական ծայրահեղ արմատականության մեջ առավել ընդգծվում է մուսուլմանական աշխարհում ջիհադական պայքարի խորացման և, որպես արդյունք, շարիաթի օրենքների վրա հիմնված «Իսլամական պետության» ստեղծման հնարավորությունը, որը 2014թ. դարձավ իրողություն:

Հավելվածում ներկայացված են ԱՄՆ տնտեսությունների և խաղաղության ինստիտուտի (IEP) կողմից 2012թ. հրապարակած աշխարհում 2002-2011 թթ.ընթացքում իրականացված ահաբեկչական գործողությունների ցուցանիշներն՝ ըստ ահաբեկչությունների թվաքանակի, դրանց ժամանակ օգտագործված զինատեսակների և արդյունավետության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդվածներ

1. Սուննիական արմատական գաղափարախոսության արժեհամակարգը 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո («Ալ-Կաիդա»), Կանթեղ, 4(41), Երևան, 2009, էջ 239-243:
2. Գլոբալ ջիհադի հայեցակարգը 21-րդ դարի սկզբին, Համաշխարհային պատմության հիմնահարցեր, ընկերային կառույց, գաղափարախոսություն, քաղաքական համակարգ: Երիտասարդ պատմաբանների միջբուհական 2-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013, էջ 137-142:
3. Սիրիական հակամարտության էթնիկ-դավանականի վերածվելու վտանգը, Տարածաշրջանային խնդիրներ, 2013, 1, Երևան, էջ 111-115:
4. «Ալ-Կաիդա»-ի ռազմավարական նոր հիմնադրույթների կիրառումը Սիրիայում, Տարածաշրջանային խնդիրներ, 1(4), Երևան, 2014, էջ 37-41:
5. «Ջիհադ» հասկացությունը իսլամի վաղ շրջանում (7-9-րդ դարեր), Կանթեղ, 1(62), Երևան, 2015, էջ 79-87:

ГРИГОРЯН САРКИС МАРТИНОВИЧ

КОНЦЕПЦИЯ ДЖИХАДА В ИДЕОЛОГИИ СУННИТСКОГО ИСЛАМИЗМА (НА ПРИМЕРЕ «АЛЬ-КАИДЫ»)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 -«Всемирная история».
Зашита состоится 12-го мая 2015 г., в 15.00 ч. на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяана 24/4.

РЕЗЮМЕ

Концепция джихада, как фактор в международных процессах, приобретает неполные, а довольно часто и определенные политические, экономические, религиозные и мировоззренческие проявления в международной политике, СМИ и массовом сознании. В этом контексте особую важность приобретает раскрытие особенностей концептуального и практического применения джихада в суннитском радикализме и его переформулировки на современном этапе.

Выбор темы диссертации обусловленизучением концепции джихада в конце 20-го - начале 21-го веков, раскрытием его особенностей в исламе, рассмотрением механизмов его теоретического и практического применения в современной исламской радикальной идеологической плоскости.

Во **введении** обоснованы актуальность темы, цели и задачи работы, научная новизна работы, хронологические рамки, методологическая основа, прикладное значение, представлены первоисточники и литература, которые были использованы.

Первая глава под названием «**ПОНЯТИЕ «ДЖИХАД» И ЕГО ПРИМЕНЕНИЕ С РАННЕИСЛАМСКОГО ПЕРИОДА ПО 20-Й ВЕК»** разделяется на три параграфа.

В первом параграфе, озаглавленном «**Формирование понятия “джихад” в раннеисламский период и его применение в 7-9 вв.»,** кратко описываются истоки формирования понятия «джихад», говорится об упоминаниях этого понятия в Коране и хадисах и о его прикладном значении в трудах мусульманских авторов.

В следующем параграфе под названием «**Концепция джихада в 10-17 вв**.» говорится о формировании джихада как концепции, которая в 12-14 гг. приобрела целостный характер. В дальнейшем она в некоторой степени переформулировалась и дополнялась в связи с требованиями конкретного периода.

В третьем параграфе под названием «**Концепция джихада в 18-20 вв.»** говорится об изменениях в концепции джихада в 18-20 веках, которые стали заметны в вышеупомянутый период и связаны с начавшимися в мусульманском мире преобразованиями дальнейшими процессами.

Вторая глава под названием «**НОВЫЕ ПРОЯВЛЕНИЯ КОНЦЕПЦИИ ДЖИХАДА В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ 20-ГО ВЕКА**» состоит из четырех параграфов. В первом параграфе, озаглавленном **«Сложившаяся в**

мусульманском мире ситуация в конце 20-го века», изучается ситуация, сложившаяся в мусульманском мире, произошедшие изменения и их влияние на концепцию джихада.

Во втором параграфе, озаглавленном «**Новые проявления концепции джихада; деятельность Абдаллы Аззама»,** говорится об активизировавшемся в результате афганской войны 1979 года потенциале исламского радикализма, одном из новых идеологов - Абдалле Аззаме - и новых подходах, касающихся выдвинутой им концепции джихада.

Ниже перечисляются основные концептуальные положения джихада, выдвинутые им в радикальной исламской идеологии в 80-х годах 20-го века:

1. Вторжение в мусульманскую страну из немусульманских стран требует безотлагательного военного вмешательства. Все мусульмане мужского пола, способные участвовать в военных действиях, должны защищать захваченную мусульманскую страну, в какой бы части света они ни были;
2. В мусульманской стране борьба с завоевателями является личной обязанностью мусульманина, ион не нуждается в разрешении для этого;
3. Джихад должен носить постоянный характер, то есть быть систематическим, и он должен быть и в идеологическом пространстве;
4. Аззам придавал важность и борьбе мусульман против неверующих за пределами исламского мира.

В третьем параграфе под названием «**Формирование „Аль-Каиды" и сетевая сущность джихадистской борьбы»** говорится о формировании террористической организации «Аль-Каида», а также ее постепенном превращении в сетевую организацию.

В четвертом параграфе под названием **«Усама Бен Ладен и концепция „Глобального джихада" в последнем десятилетии 20-го века**» говорится о роли Усамы Бен Ладена в сформировавшейся джихадистской борьбе, идее всеобщего джихада, внедренной им, а также о том, как «Аль-Каида» стала авангардом всеобщей джихадистской борьбы.

В выдвинутую бен Ладеном концепцию всеобщего джихада были включены три основных постулата, по которым она отличалась от идей, выдвинутыхдругими радикальными исламистскими течениями.

1. США и его союзники были объявлены основными противниками, то есть был сделан переход от «ближнего врага» к «дальнему врагу». Это и отличало всеобщих джихадистов от остальных, в частноститем, что до этого мишени джихадистов носили локальный характер;
2. «Аль-Каида» представила осуществленные ею действия как инструмент защиты ислама и призывала к мусульманскому единству против общего врага;
3. Объявленная война получила всеобщий характер. В вопросе выбора мишеней бен Ладен не ограничивался одной страной. Он призывал к нанесению ударов по американским объектам и интересам по всему миру.

Третья глава диссертации под названием **«КОНЦЕПЦИЯ ДЖИХАДА В НАЧАЛЕ 21-ГО ВЕКА»** разбита на три параграфа:

В первом параграфе под названием **«9/11: борьба с международным терроризмом: Аль-Каида перед новыми вызовами. Айман Аль-Завахири, Абу Мусаб Аль-Заркави, Сейф Аль-Адль**» говорится о борьбе с мировым терроризмом, объявленной после теракта 11 сентября 2011 года в США, а также

о военных действиях против «Аль-Каиды», которая была выбрана в качестве мишени.

Во втором параграфе под названием «**Тактические изменения „Аль-Каиды" в первом десятилетии 21 века: концепция Абу Мусаба Аль-Сури «Низам, Ла Танзим**», в которой говорится о новых тактических направлениях в джихадисткой борьбе, осуществляемой «Аль-Каидой».

Один из идеологов «Аль-Каиды» нового поколения Абу Мусаб Аль-Суриразработал задачи практического применения идеологии джихада в современных условиях, сделал анализ джихадистской борьбы в разные периоды истории, а также представил ее сильные и слабые стороны.

Выдвинутая Абу Мусабом Аль-Сури стратегия джихадисткой борьбы опирается на два типа джихада:

1. Индивидуальный террористический джихад и активность тайных действий малочисленных, действующих независимо друг от друга групп, предполагающих уничтожение позиций противника путем партизанской борьбы

2. При наличии необходимых предпосылок участие открытых фронтов в джихаде, которое в первую очередь предполагает контроль над территориями, после освобождения которых будут установлены законы шариата.

В третьем параграфе, озаглавленном **«Джихадистская борьба и нынешние тенденции исламского ультрарадикализма»**, говорится о развитиях, происходящих в ультрарадикальном исламском пространстве в первом десятилетии 21-го века.

В **заключении** подытоживаются основные результаты диссертации, делаются выводы.

В **приложении**представлены обнародованные американским Институтом экономики и мира (IEP) показатели террористических действий, осуществленных в мире с 2002 по 2011годы, по числу террористических актов, применяемыми средствами оружия и эффективности.

GRIGORYAN M. SARGIS

THE CONCEPT OF JIHAD IN THE IDEOLOGY OF SUNNI ISLAMISM (FOLLOWING THE EXAMPLE OF Al-QAEDA)

The defense of the dissertation will take place at 15.00, on May 12, 2015 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The concept of Jihad as a factor in international processes finds its incomplete and, quite often, its certain political, economic and religious manifestations in international politics, mass media and public consciousness.

The peculiarities of the conceptual and practical application of Jihad in the Islamic sunni radicalism and its reformulation in the current stage takes on a particular significance in this context.

The choice of the theme of the dissertation aims to study the concept of Jihad in the late 20th and early 21st centuries, to reveal its peculiarities in Islam, to investigate the mechanistsm of its theoretical and practical applocations in the field ofcurrent radical Islamic ideology.

The actuality of the theme, the aims and the objectives of the research, its scientific novelty,time limits,methodological basis as well as itspractical significance are highlighted in the **Introdcution.** The literature and references are mentioned in this part of the research, as well.

Chapter one, titled "THE CONCEPT OF JIHAD AND ITS APPLICATION FROM EARLY ISLAMIC TIMES TO THE 20TH CENTURY" is divided into three subchapters.

The first subchapter, under the title of "**The formation of the notion of Jihad in early Islamic times and its practical application in the 7-9th centuries"**, comes up with a brief review of the origins of the formation of the notion of Jihad. It focuses on the references of Jihad in Quran and in the hadiths as well as on the practical significance of the notion presented by later Muslim authors.

The next subchapter titled "**The concept of Jıhad in the 10-17th centuries",** centers on the formation of Jıhad as a concept" that was completed in the 12-14 centuries. İt used to undergo slight reformulations later on conditioned by the requirements of certain time periods.

The third subchapter, "**The concept of Jıhad in the 18-20th centuries"**reviews the major changes in the concept of Jihad in the 18-20th centuries,connected with the reforms in the Muslim world and future procedures.

The second chapter under the title of "**THE NEW MANIFESTATION OF THE CONCEPT OF JIHAD IN THE LAST QUARTER OF THE 20TH CENTURY"** is made up of four subchapters.

The first subchapter - **"The situation in the Muslim world in the late 20th century"**, presents the situation, the changes in the Muslim world and their influence of the concept of Jihad.

The second subchapter - "**The new manifestations of the concept of Jihad. Abdallah Azzam and his activity**" concentrates on the Islamic extremist potential that became active as a result of the Afghan war unleashed in 1979, one of the ideologist of the time - Abdallah Azzam and the new approaches to the concept of Jihad. The latter put forward the following ideas concerning the concept of Jihad in the radical Islamic ideology in the 80s of the 20th century:

1. The invasion of a Muslim country by any non-Muslim country calls for immediate military interference. Each Muslim male who is capable of participating in military actions must defend the occupied Muslim country regardless of their location.

2. The fight against occupants in Muslim countries is the duty of each Muslim, for which he needs no permission.

3.Jihad must be permanent in nature, that is it must be continuous and must be applied in the sphere of ideology, as well.

4. Azzam also attaches great importance to the fight of the Muslims against the "faithless" outside of the Islamic world.

The third subchapter - "**The formation of Al-Qaeda and the Jihad warfare as a network", r**eviews the history of the formation of Al-Qaeda and its gradual becoming as a network organization.

The forth subchapter - "**Osama Bin Laden and the concept of the "Global Jihad" in the last decade of the 20th century**, refers to the role of Osama Bin Laden in Jihad, the universality that he brought to the struggle and Al Qaeda's role as the pioneer in the universal Jihad.

The concept of Jihad proposed by Bin Laden includes three key elements that came to set it apart from the ideas presented by other extreme Islamic movements.

1. The USA and its allies were pronounced the key rivals, i.e. "The NearEnemy" was replaced by "The Far Enemy". This came to set the universal jihadists apart from the others by the fact previouslythe targets of jihadists were oflocal nature.

2. Al-Qaeda presented its actions as a tool to defend Islam and called for Islamic unity against the common enemy.

3. The war declared took on a universal nature. As to the choice of targets, Bin Laden did not confine himself to a single country. He urged to carry out attacks on the US objects and interests in the whole world.

The third chapter of the dissertation that goes under the title "**THE CONCEPT OF JIHAD EARLY IN THE 21STCENTURY"** consists ofthree subchapters.

The first subchapter "**9/11. Fight against international terrorism. Al-Qaeda facing new challenges. Ayman Al-Zawahiri, Abu Musab Al-Zarqawi, Saif Al-Adel**", focuses on the international fight against world terrorism following the terrorist acts of September 11 and on the military actions against Al-Qaeda as a key target.

The second subchapter - "**The changes in the tactics of Al-Qaeda in the first decade of the 21st century. "Nizam la Tanzim" concept by Abu Musab Al-Suri",** highlights the new tactics in Jihad adopted by Al-Qaeda.

Abu Musab Al-Suri, one of the ideologists of thenew generation of Al-Qaeda worked out the objectives of thepractical application of Jihad ideology in modern times. He came up with a detailed analysis of Jihad in different stages of history highlighting its advantages and disadvantages.

The strategy of Jihad as proposed by Al-Suri was based on two types of Jihad:

1.Individual terroristic Jihad, few-member groups acting in secret. This implies decomposition of the enemy units by guerrilla struggle.

2. Jihad in open battlefield (if the necessary conditions are met) which, in its turn, presupposes control over territories. Shariat rules will be established once these territories are liberated.

The third subchapter - "**Jihad and the current trends of extreme Islamic radicalism" r**efers to the current developments in extreme Islamic radical movements in the first decade of the 21st century.

The **conclusion** sums up the key results of the research.

The **appendix** presents the indices of the terrorist acts in the world from 2002 to 2011 according to IEP (US Institute of Economics and Peace) 2012. These indices are based on the number of terrorist acts, the weapons used and their efficiency.